ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

—

1. ԹՈՔԱԽՏԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ։ Միլանի պրոֆ. Զուզեպպէ Լեւինը Վիկտոր - Էմմանուէլ իտալական կայսեր ուղղած մի նամակում յայտնում է, որ ինքը գտել է թոքախտի հիմնաւոր բժշկութեան միջոցը։

Վաղուց էր աշխատում պրոֆ. տուբերկուլեոզի բժշկութեան ժամանակ եօդ գործածել Դորա համար նա պէտք է երկու արգելքների առաջն առնէր. առաջին՝ մարդկային կազմուածքի մէջ եօդ մտցնելու միջոցը, երկրորդ՝ դորան յարմար էլ եօդի խարնուրդ գտնել։ Ինչպէս յայտնի է, վերջին ժամանակներս սկսել են եօդի զանազան խառնուրդներ գործ դնել. օրինակ՝ iodoform, iodol, aristol, iodoisakol և այլն, որոնք միջոց են տալիս ուղած ժամանակ եօդ մտցնել մարդու կազմուածքի մէջ։ Թէպէտ այդ խառնուրդներն էլ բաւարար ազդեցութիւն են անում, բայց թոքերի բժշկութեան ժամանակ վերջնական նպատակի չեն հասնում։ Անհրաժեշտ էր մի ուրիշ միջոց գտնել և այդ փորձերի ժամանակ պ. Լեւինը նկատեց, որ թէպէտ և 2-3 օրից յետոյ կենդանիների արեան մէջ մտցրած եօդի ոչ մի նշոյլ չէ նկատւում, բայց և այնպէս այդ կենդանիների արիւնը տուբերկուլիոզի մանրէներ ոչնչացնելու յատկութիւն է ստանում։

Այստեղ Լեւինն այն եզրակացութեան եկաւ, որ այդ կերպով ստացուած արեան շիճուկը պէտք է առողջարար յատկութիւն ունենայ թոքախտի դէմ։ Նա սկսեց փորձեր կատարել մարդկանց և կենդանիների վրայ։

Սակայն նրա յոյսերը չիրականացան. թէպէտ արեան շիճուկը բաւական դոհացուցիչ ազդեցութիւն էր անում, բայց շատ հեռու էր հիւանդութիւնը հիմնաւորապէս բժշկելուց, նոյնիսկ թեթև և ոչ սաստիկ հիւանդութեան ժամանակ։ Բայց, վերջապէս, երկար փորձերից յետոյ պր. Լեւիին յաջողուեց այնպիսի մի նոր կերպարանք տալ եօդին, որ նա ստանում է բոլոր անհրաժեշտ յատկութիւնները և վերջ ի վերջոյ հիմնաւորապէս ոչնչացնում է թոքախտը։

Այդ դրութեան մէջ եօդը կորցնում է իր թունաւոր գըրգռող յատկութիւնը, մարմինը ոչ մի հակառակ ազդեցութիւն չէ արտայայտում, այլ ընդհակառակը ամէն անգամ հեշտութեամբ է ընդունում շիճուկը։

Տուբերկուլեօզով հիւանդին այդ շիճուկը պատուաստելուց յետոյ, նկատուում են արեան ուժեղ շրջանառութիւն, 10-15 անգամ պատուաստելուց յետոյ կամաց-կամաց տենդային դրութիւնը ընդհատուում է, հիւանդութեան երևոյթները անհետանում են և հիւանդը աւելի աշխոյժ է դառնում։

Տուբերկուլեօզի թարախակալութիւնից առաջացած դատարկ տեղերի վրայ եօդի պատուաստի ազդեցութիւնը իմանալու համար, պր. Լեւինը փորձեր կատարեց կենդանիների վրայ, որից երևաց, որ տուբերկուլեօզով հիւանդ կենդանիներին 25-30 անգամ պատուաստելուց յետոյ դատարկ տեղերն սկսում են կրկին նոր գոյացութիւններով ծածկուել, իսկ մանրէները մի ինչ որ գոյն են ստանում և հաւաքուում մի տեղ։

Ինչ վերաբերում է մարդկանց, իհարկէ որ այդպիսի մանրազննական փորձեր չէր կարելի կատարել։ Բայց այն բաւարար փոփոխութիւնները, որոնք նկատուել են մի շարք հիւանդների վրայ, իրաւունք են տալիս կարծելու, որ նոյնիսկ վերոյիշեալ դատարկ տեղերի գոյութեան ժամանակն էլ կարելի է հիմնաւորապէս բժշկել թոքախտաւորներին։

Պր. Լեւիի միջոցի գործադրութիւնը շատ հեշտ է և գլխաւորապէս բաղկացած է բնական եօդի մաքուր, ջրի մէջ լուծուածքից, որ պատուաստում են մկաններին։ Այդ պատուաստումները շատ հեշտ են կատարուում և ոչ մի հիւանդոտ երևոյթ չեն առաջացնում։

2. ԾՈԾՐԱԿԻ ԿՕՆՏՐԱԿՏՈՒՐԱ։ Մենինգիտ, կամ ինչպէս ասում են կօնտրակտուրա նոր հիւանդութիւնը, որ վերջին ժամանակներս համաճարակ ընթացք է ստացել արտասահմանում, մեծ շփոթ և երկիւղ առաջացրեց այնտեղ։

Գերմանական բժիշկ Փրանկը, որ Կաշտուվիցի քաղաքային հիւանդանոցում հետազօտել է յիշեալ հիւանդութեան ամբողջ ընթացքը, մեծ յօդուած է նուիրել յատկապէս այդ հիւանդութեան։

Ինչպէս երևում է, կօնտրակտուրա հիւանդութիւնը նոր բան չէ, այլ շատ տարիներ առաջ էլ է եղել։ Առաջին դէպքը պատահել է Ժնեւում. այնուհետև 1882 թուին երևացել է և Գերմանիայում. իսկ անցեալ դարու վաթսունական թուականներին արդէն յաճախ էր նկատուում։

Հիւանդութեան գլխաւոր ախտանշանները կարելի է հեշտութեամբ նկատել հասակն առած կամ թէ մանկութեան հասակն անցած հիւանդների վրայ։ Զարգուշակ ախտանշաններն են՝ անտանելի գլխացաւ, ոսկրացաւ, ցնցումներ, զառանցանք, քութեշի նման բշտիկների և կէտերի գոյանումն ամբողջ մարմնի վրայ։ Ամենաչնչին շօշափումն անգամ անտանելի ցաւ է պատճառում հիւանդին։ Հիւանդի զարկերակը շատ փոփոխական է լինում, մէկ տենդային դրութիւն է արտայայտում, մէկ էլ բնական կերպարանք է ստանում։ Այդ դրութեամբ հիւանդութիւնը կարող է 4-6 շաբաթ տևել և այդ ժամանակամիջոցին յաճախ հիւանդութիւնն այնպիսի սուր կերպարանք է ստանում, որ հիւանդները (գլխաւորապէս հասակաւորներ) 3—4 օրուայ ընթացքում մեռնում են։ Բայց լինում են դէպքեր, երբ հիւանդութիւնը շատ արագ և լաւ է անցնում։

Կօնտրակտուրայի ամենածանր երևոյթի հետևանքները, այսինքն խլութիւն, կուրութիւն, ապշութիւն և այլն, ցոյց են տալիս, որ ուղեղի բորբոքումը մինչև նեարդերի արմատներն է տարածւում։

1887 թուից Վիեննայի բժիշկ Վեկսելբաումը գտել է կօնտրակտուրայի համաճարակ տեսակի մանրէն (диплоккокъ)։ Փոքր դեր չէ կատարում և մարդու կազմուածքի առանձնայատկութիւնը։ Սլավիկայում վերոյիշեալ մանրէն գտնուել է նոյն իսկ առողջ երեխայի քթի լորձամաշկի արտաթորութեան մէջ։

Բժիշկ Ֆրանկն ասում է, որ այդ հիւանդութեան դէմ բժշկականութիւնը ոչ մի միջոց չունի, այնպէս որ ստիպուած են լինում նրա առանձին երևոյթների դէմ մաքառել։ Նա անհրաժեշտ է գտնում—հիւանդներին առանձնացնելը, ֆիզիքական և հոգեկան բացարձակ հանգստութիւն, և յաճախակի վանմաներ։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

Երիտասարդ ճարտարապետ-տեխնօլոգ Յովհաննէս Թիզանեանը ձեռնարկել է մի կարևոր և մեծ աշխատութեան.—նա կազմում է հայկական ճարտարապետութեան և հնախօսութեան վերաբերեալ մի ընդարձակ գործ, որի մէջ պէտք է մտնեն Հայոց վանքերի և հնութիւնների մեծ թուով գունաւոր և սև պատկերներ։ Մենք առիթ ունեցանք տեսնել նորա՝ այդ նպատակի համար նկարած մի քանի իւղաներկ մեծադիր պատկերները՝ Մեծ ու փոքր Մասիսների, Սանահնի կամրջի, Հաղբատի ներսի մի տեսարանի և այլն, բոլորն էլ գեղարուեստական ընտիր գործեր, որոնց մանրանկարները պիտի մտնեն յիշեալ աշխատութեան մէջ։

Այդ գործի հրատարակութիւնը հաշուած է 15—20 հազար ռուբլի։